

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թուրքիոյ հայոց 85-րդ պատրիարքի ընտրութեան
Նախաձեռնարկ ճարմնի ատենապետ եւ անդամներ

Յարգելի բարեկամներ,

Մենք՝ Թուրքիոյ հայ համայնքի անդամ հանդիսացող ներքոստորագրեալներս, կ'ուզենք մեր գաղափարները յայտնել ձեզի՝ պատրիարքական ընտրութեան վերաբերեալ որոշումներ ընդունելու նախօրէին. որոշումներ, որոնք կենսական են եւ ի հիմանէ պիտի ազդեն մեր ապագային վրայ:

Նախեւառաջ, բոլորս ալ վկայ ենք, թէ վերջին տասը տարիներուն համայնքէ ներս առկայ կառավարումի տազնապը ինչպիսի խորութեամբ եւ բացասաբար ազդած է մեր հանրութեան:

Ցաւ ի սիրտ կը տեսնենք, որ դժուարին այս տասը տարիներէ ետք, անցեալ շաբաթ հասած պատրիարքական ընտրութեան կանոնադրութիւնը կը վտանգէ պատրիարքական բնական թեկնածու հանդիսացող եպիսկոպոսներուն միջեւ ընտրութիւն մը կատարելու մեր համայնքին իրաւունքը, զոր ան շահած է 1961-ին: Նկատի ունենալով, որ նման իրաւունքի մը կապտումը Թուրքիոյ հայերը անկարելի է որ ընդունին լռութեամբ, կ'ուզենք հաւատալ, թէ հնարաւոր սխալ մը կանխելու ուղղութեամբ հնարաւոր ամէն միջոց ի գործ պիտի դնէք եւ մինչեւ վերջ պիտի պաշտպանէք մեր համայնքին շահերը:

Պատկան ճարմիններուն խնդրագիր մը ներկայացնելով եւ ընդդիմանալով հայ համայնքի ապագան եւ ներկան վտանգող նման պարտադրանքի մը դիմաց՝ կրնաք յոյս եւ աւիշ ներարկել Թուրքիոյ հայութեան: Այլապէս, կ'ուզենք յիշեցնել, թէ կատարելի ընտրութեան օրինականութիւնը միշտ պիտի մնայ հարցականի տակ:

Իսկ մեր հանրութեան առողջ կերպով ներկայացուիլը վտանգող բոլոր այս զարգացումներուն ձեր համակերպումը ո՛չ միայն ձեր, այլ ներկայի առջեւ պատասխանատուութիւն ունեցող մեր բոլորիս ճակտին պիտի քսէ սեւ մուր մը: Կը մաղթենք, որ դուք, որ այս ծանր բեռը կը կրէք ձեր ուսերուն, մաս եւ բաժին չունենաք այս ամօթանքէն:

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ